

Հարգելի հաճախորդներ, այսուհետ Ձեզ հասանելի է լինելու ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ «Ցանկացած» ծրագիրը, որը ներկայացնում է «ՀԾ-ՄոբայլԲանկ» ծառայությունը:

### **Մոբայլ Բանկի առավելություններ**

«ՀԾ-ՄոբայլԲանկ» ծառայությունը հնարավորություն է ընձեռում օգտվել բանկային ծառայությունների լայն սպեկտրից ամարթֆոնի և պլանշետի միջոցով, տվյալ ծառայության շնորհիվ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հաճախորդներին ընձեռվում են մի շարք առավելություններ, մասնավորապես, անհրաժեշտ բանկային ծառայությունների հասանելիություն ցանկացած պահի՝ արագ և անվտանգ, բանկ այցելելու համար նախատեսված ժամանակի խնայում, հնարավոր հերթերից խուսափում: «ՀԾ-ՄոբայլԲանկ»-ը հասանելի է, ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդներին և մատուցվում է համաձայն «ՀԾ ԻնտերնետԲանկ» ծառայության սակագների: Եթե հաճախորդը հանդիսանում է «ՀԾ ԻնտերնետԲանկ» ծառայության օգտատեր, ապա տվյալ հաճախորդին՝ առանց լրացուցիչ քայլերի իրականացման անհրաժեշտության, հասանելի է լինում նաև «ՀԾ-ՄոբայլԲանկ» ծառայությունը, որից օգտվելու համար, վերոգրյալ հաճախորդին անհրաժեշտ է ներբեռնել համապատասխան հավելվածը, իսկ «ՀԾ ԻնտերնետԲանկ» ծառայության օգտատեր չհանդիսանալու դեպքում՝ մոբայլ բանկի գործիքակազմից օգտվելու համար, հաճախորդը մոտենում է Բանկի Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ, լրացնում է անհրաժեշտ հայտը, որից հետո համապատասխան հաճախորդին տրամադրվում է գաղտնանուն և գաղտնաբառ՝ համակարգ մուտք գործելու համար, անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև DIGIPASS GO կամ DIGIPASS 260 սարքը: Մենք հոգացել ենք մեր հաճախորդների անվտանգության համար, մասնավորապես, «ՀԾ-ՄոբայլԲանկ» ծառայությունն օժտված է անվտանգության ապահովման նորագույն տեխնոլոգիաներով: Անվտանգության նկատառումներից ելնելով անհրաժեշտ է, որ Ձեր անվտանգության տվյալները չտրամադրեք այլ անձանց:

Ինտերնետի և համապատասխան սարքի առկայության դեպքում «ՀԾ-ՄոբայլԲանկ» հավելվածի միջոցով Դուք ցանկացած ժամանակ, ցանկացած տեղից կարող եք՝

## Ռիսկեր

- ✓ բանկային հաշիվների ընթացիկ մնացորդներն ու իրականացրած գործարքները,
- ✓ հաշիվների, պլաստիկ քարտերի, վարկերի և ավանդների քաղվածքները,
- ✓ քարտային հաշվի մնացորդը,
- ✓ վարկերի մասին տեղեկատվությունը`
  - վարկի տեսակը,
  - վարկի սկզբնական գումարը,
  - վճարվելիք տոկոսագումարը,
  - վարկի մնացորդը,
  - մարման ժամանակացույցը,
- ✓ ավանդների մասին տեղեկատվությունը`
  - ավանդի տեսակը,
  - ավանդի ժամկետը,
  - տոկոսագումարների վճարման չափը և ժամանակացույցը,
- ✓ արտարժույթի փոխարժեքները:

## Իրականացնել`

- ✓ փոխանցումներ ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս,
  - ✓ արտարժույթի փոխանակումներ,
  - ✓ վարկի մարում,
  - ✓ ավանդի բացում/համալրում,
  - ✓ կոմունալ վճարումներ :
- 
- ✓ Ներմուծել տվյալներ,
  - ✓ Ուղարկել նամակներ և կից ֆայլեր,
  - ✓ Ստեղծել փաստաթղթերի ձևանմուշներ:

*ԱՊԱԳԱՆ ԱՐԴԵՆ ԱՐԱՐԱՏԲԱՆԿՈՒՄ Է...*